ԳԻՏԱԿԱՆՔ

ՆՈՐ ՕԴԱՉՈՒ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Նախ և առաջ գնդապետն Կոտար՝ իւր այցետոմսը ներկայացուց ինձ. տոմսին վրայ կարդացի հետևեալ տողերը.

ԼՈՒԻ ԿՈՏԱՐ

ՆԱԽԱԳԱՀ ՕԴԱՉՈՒ ԺԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑԻՆ

Տեղակալ 36ր. բաժնի հետևակաց

ՓԱՐԻԶ

— Օդաչու ճանապարհորդաց ցեղէ մը յառաջ կու գամ, յաւէ Կոտար. իմ ցեղէս երեք սերունդք՝ յաջորդաբար այս արուեստը կատարեցին և ամէնքն ալ ընդդէմ այս արուեստին կից արհաւրաց և վտանգաց, իրենց անկողնոյն մէջ մեռեր են։

— Քանի՞ վերելք կատարեր էք Պ. Կոտար։

— Չորս հարիւր տասուերկու, և միշտ առողջ վիճակի մէջ եմ։ Մէկ անգամ, աղէկ կը յիշեմ օդապարիկով ժամուան մէջ 140 մղոն կտրեցի և ամենևին չվնասուեցայ։

Այս դիպուածը յարմար պատասխան մ'է այն անձանց, որ ամէն վերելից մէջ մեծամեծ վտանգներ կ'երևակայեն։

Կարծեմ նոյն վայրկենին ամէնքնիս ալ կը նախանձէինք Կոտարի վիճակին, ինչու համար այս անգամ ալ չի չնչեր բարեյաջող հովանք մը և չի տանիր զմեզ 'ի բարձունս Ալպեայց։

Երկրորդ այցետոմսին վրայ կը կարդամ

digitised by A.R.A.R.@

ԱԼՓՐԷՑ ՎԱՅԼ ՕՔՈԹ

Միլանի հարուստ սեղանաւոր մը, չորրորդ ճանապարհորդն մի-լանցի մեծահարուստ վաճառական մ'էր։

Սակայն օդապարիկը շատ դանդաղ կը քալէր. — սկսանք ձանձ-րանալ մթնոլորտին այս հանդարտութենէն։

Վարը դաշտերուն վրայ մէկ մղոն հեռաւորութեամբ որոշ կը տես-նուէր գնտոյն սև ստուերը, որ դանդաղութեամբ կը շարժէր անցնե-լով մարգագետիններէ, թուփերէ, գետակներէ, լճակներէ և ան-տառներէ, այլ միշտ միօրինակ դանդաղութեամբ։ Սակայն մեր հա-շիւները ընելով՝ գտանք ճշդիւ որ այն դանդաղութեամբ իսկ տաս կամ տասուերկու մղոն կը կտրէինք։ Եթէ օդոյ բնագոյն հոսանք մը գտնէինք՝ մեր երագութիւնը թերևս տասնապատկէր։

Երեք տարի առաջ՝ երկու պատանիք իրենց առաջին վերելից ժա-մանակ՝ հովի հոսանաց մը հանդիպեցան և գրեթէ երեք ժամու մէջ Միլանէն մինչև Աոսթայի ձորը հասան, կարծես թէ թռան Լոմպար-տիոյ և Բիէմոնդի վրայ։

Կոտար իւր զուարճաբանութեամբը զմեզ կը զուարթացնէր։

Համառօտ կերպով Բարիզու պաշարման դէպքերը յիշեցինք, ո-րոց մէջ օդապարիկը մեծ դեր խաղաց։ Ամէն օր, կամ երկու օր մէկ, մայրաքաղաքէն օդապարիկք կը մեկնէին պաշարեալ քաղաքին լու-րերը Գաղղիոյ հաղորդելու համար։ Սակաւք Գերմանացւոց ձեռքը ինկան. և 168 օդապարիկներէն՝ միայն չորս հատը ծովու վրայ կոր-սուեցան։ Թղթատարի պաշտօն կը կատարէին այս օդապարիկք. Նա-մակաց համար առ չորս կրամ 20 հարիւրեակ կը վճարուէր։ Բարիզու լրագիրք իսկ այս միջոցով կ'ուղարկուէին 'ի Գաւառաքաղաքս և սա-կաւ ճանապարհորդք իսկ կը յանդգնէին այն վտանգալից անցքն ը-նելու։ Որոշ կը յիշեմ որ այս կերպով ուղարկեալ նամակաց թիւը անցաւ քան զ2,500,000. այսինքն գրեթէ տասը տակառաչափ ծանրութիւն։

Ժամը 7 ին Կոտար որոշեց վար իջնել։ Գիշերը անլուսին էր, ստա-մոքս դատարկք և հետևաբար խոհեմութիւն չէր մութին սպասել։ Ափսոս. արևը նուազ կիզիչ էր, և այս ձանձրութենէն ալ ազատե-լով շատ հանգիստ էինք, և ճիշդ ահա այս քաղցր ժամուն կը վերջա-նար մեր ճանապարհորդութիւնը։ Քիչ մը առաջ Ատտա գետը ան-ցեր էինք դէպ 'ի Քրէմայի կողմը։ Քանի մը վայրկենէ 'ի վեր անըզ-գալաբար վար կ'իջնէինք. վասն զի ահա այս կէտս ալ օդային ուղևո-րութեան զարմանալի մասնաւորութեանց մին է. այսինքն բաւական բարձրանալէդ վերջը՝ քանի մը հարիւր մեդր իջնես կամ բարձրանաս՝ պարզ աչօք առանց օգնականութեան գործեաց՝ չես կրնար իմանալ. բաւական վերջը երբ ստորոտը եղող առարկայք համեմատաբար

digitised by A.R.A.R.@

մեծնան՝ այն ատեն մարդ կ'զգայ միայն, եթէ աչքը սևեռէ 'ի գետին։

Նոյն վայրկենին ճանապարհորդաց մին վեր նայելով՝ տեսաւ որ գնտոյն ստորին մասը թուլացեր է և գրեթէ դատարկ՝ ահաբեկեալ իսկոյն աղաղակեց առ կօտար.

— Ցիրաւ, կ'իջնենք.

— Ցարակոյս չկայ, պատասխանեց կօտար։

— Բայց գունտը կը դատարկի և կը թուլանայ.

— Օդոյ ցրտութեան պատճառաւ է. կազը այլ ևս նոյն տարածականութիւնը չունի վասն զի արևուն ջերմութիւնը նուազ է։

Օդաչու ուղևորութեան մէջ՝ իջումը ամենէն աւելի զուարճալի մասն է։ Մինչ դեռ երկու կամ երեք հազար մէդր բարձր է գունտը՝ ոչ ոք կ'ենթադրէ թէ այն սև կէտը՝ օդապարիկ մ'է որոյ մէջ գտնուին շնչաւոր անձինք։ Սակայն երբ կ'իջնէ ցհազար մէդր՝ օդապարիկը գրեթէ իւր որոշեալ ձևը կ'առնու. առկախեալ մակոյկը դուշակել կու տայ որ. անշուշտ մէջը մարդ ալ պիտի գտնուի. յետոյ կամաց կամաց երբ երկրին մօտենայ՝ ճանապարհորդաց ձևերն ալ կ'սկսին երևնալ. յետոյ թիւը, յետոյ նաև ձայնն իսկ, եթէ մեզի նման աղաղակէ, հանդիպած զիւղերը հարցնելու համար։

Երկու կամ երեք հարիւր մէդր բարձրութեան՝ գիւղացիք և ոչ սակաւ քաղաքացիք իսկ իրենց զարմանքը և ապշութիւնը այլ ևս չեն զսպեր, և կ'սկսին այլանդակ ձայներով աղաղակել։ Նախ դեռ քիչ մը աւելի բարձր եղած ժամանակ՝ կը կարծեն թէ ողոյց խաղալիկ տրուած գունտերէն մին է, բայց երբ օդապարիկը քիչ մը աւելի վար կ'իջնէ և կը տեսնեն իւր ահագին մեծութիւնը՝ ալ այն ատեն իրենց ապշութեան չափ չի կայ։ Երկու ժամ առաջ զբեզ հեռու և բարձր տեսած ժամանակ՝ կը կարծէին թէ տեսակ մը սև թռչուն է, մինչդեռ վար իջած ժամանակ կը տեսնեն որ օդապարիկ մ'է, և թէ մէջը մսէ և ոսկրէ յօրինեալ մարդիկներ կան որք կը խօսին կը շարժին և կ'ողջունեն։ Փոքր սրիկայք դուրս ցատքելով տանց գաւիթնեբէն՝ յիմարաբար օդապարիկին ետևէն կը վազեն, կանայք իրենց փոքր մանուկը գրկերնին, սուր ճիչեր արձակելով՝ երեսնին խաչ կը հանեն և զսուրբս յօգնութիւն կը կոչեն 'ի նման զարմանաց. մշակք ձգելով 'ի դաշտի իրենց գործիքները՝ ժամերով կը դիտեն զբեզ և կ'ուզեն օդապարիկին հասնիլ որ միշտ վար կ'իջնէ։ կ'անցնին փողոցներէ, փոսերէ կը ցատկեն, մացառները կը խորտակեն. վար կ'իյնան, դարձեալ կ'ելլեն. կը յուսան որ վայրկենէ վայրկեան պիտի հասնին քեզի. կ'աղաղակեն, կը հայհոյեն, մէկզմէկ կը վռնտեն որ չըլլայ թէ առաջնութեան իրաւունքը և պատիւը կորսնցունեն. վերջապէս խառնակութիւն մը, գոռում գոչում մը՝ որ մինչև յաստեղս կը բարձրանայ։

Այլ անօգուտ աշխատանք. օդապարիկը իրենցմէ աւելի արագ

digitised by A.R.A.R.@

կ'ընթանայ երկրէ հարիւր մէդր բարձրութեամբ։ Կարծես թէ երկու, երեք վայրկենէն, կամ այն դաշտին, կամ մացառին ճամբուն վրայ կանգ պիտի առնու օդապարիկը. սակայն ժամանակը կը քաշապակի, եւեւէ վազող անձինք շնչասպառ վար կ'իյնան և կը յուսահատին այլ ևս հասնելու խաբեբայ օդապարիկին. շատերը բարկացած կ'անգ կ'առնուն և կ'սկսին սուլել և աղաղակել, իսկ ոմանք քաջերէն դեռ կը շարունակեն ընթացքնին. մենք ալ զուարճալի տեսարանը կը կորսնցունենք։

Դեռ 40 մէդր բարձրէն՝ Կոտար խարսխին չուանը նետեց։ Հարիւր հոգի մեծ և փոքր փութացին բռնել այն չուանը.

— Ազատ թողուցէք չուանը, կ'աղաղակէր Կոտար բարկացած։ Շատերը հեռացան, բայց երկու հոգի յամառութեամբ չէին թողուր։

— Նայեցէք զնեզ վեր կը քաշենք, աղաղակեցի ես։ Պոգական արդիւնք մը յառաջ բերին այս խօսքերս.— երկու դիւղացիք զարհուրած իսկոյն թողուցին չուանին ծայրը։ Երբ օդապարիկը տեղաւորուեցաւ՝ հրման տուինք գիւղացւոց որ բռնեն ուժով չուանը։ Կոտար ապահովութեան դռնակը բացաւ և բոլոր կազը ցնդեցաւ։

— Այէն բան լմնցաւ, աղաղակեցի օդապարիկին դետին նստած ժամանակ.

— Այո, լմնցաւ, պատասխանեց Կոտար։

Հացկերոյթ մը չրոյ տակ.— Կիոտատի (Ciotat) նաւահանգստին խորագոյն փորելու աշխատութիւնքն լմնցան վերջին ատեններս և նոյն պատեհաւ՝ այս ձեռնարկութեան առաջնորդն Պ. Բոպէրդ, մեծահաց նախաճաշ մը տուաւ գործաւորաց և իրենց վրայ հսկողաց։ Ցիրաւի նորօրինակ գործ մ'էր. սեղանն ծովուն երեսէն ուժգր մեդր խոր էր, նաւահանգստին հիման վրայ, մեծ արկեղ մը մէջ յորուամ գործաւորք կ'աշխատին. այս արկեղ նուրբ պատերն միայն կը բաժնէին զհրաւիրեալսն ջրոց ահաւոր կոյտէն, որ կը ճնշէր չորս կողմէն։ Այն նորագիւտ սեղանատունն փառաւորապէս լուսաւորեալ և զարդարեալ էր, և առանց ականջաց չշնչման՝ զոր կը պատճառէր արկեղ մէջ գտնուած ճնշումը, որպէս զի ջուրն յանկարծ ներս չի յարձակի, բազմականք պիտի չի տարակուսէին ամենին թէ դոյզն ինչ յապաղումն օդային ջրհանին գործողութեան, զամէնքն ալ նոյն վայրկենին մէջ պիտի խեղդէր։

Ցետ սեղանին, անակնկալ հանդէս մ'ալ կատարեցին երգի. հանդիսադրութիւնն տեւեց յետ մինչև միջօրէի մեծագոյն մասը. և հուսկ յետոյ բազմականք օդային մթնոլորտին վրայ երեցան։

Փողպատ — Լուսանկար. Արագահան լուսանկարին յառաջադիմութիւնը և գիւտերը՝ դեռ մինչև երբ պիտի շարունակեն։ Գիտնականք,

digitised by A.R.A.R.@